Նոյն գաւառի 10 գիւղում—10 եկեղ., 7 քահանաց, 2222 արակ., 2092 իգ., ընդամենը 4314 ծխկ., արականը իգականից շատ է 130 ով: Մի եկեղեցուն ընկնում է 431 ծխկ., մի քահանացին 166 ծխկ.: 10 եկեղեցին միասին ունին 4844 թ. 82 կ. զբաժագ., 1589 թ. 75 կ. մուտք, 1417 թ. 17 կ. ելք:

Ախալքալաքի գաւառի Ախալքալաք հաղափում—1 եկեղ., 5 քահանաց, 2571 ար., 2233 իգ., ընդամենը 4804 ծխկ., արականը շատ է իգականից 338 ով: Մի եկեղեցուն ընկնում է 4804 ծխկ., մի քահանացին 961 ծխկ.: եկեղեցին ունի 3595 թ. 63 կ. զբաժագ., 1465 թ. 76 կ. մուտք, 997 թ. 11 կ. ելք:

Նոյն գաւառի 57 գիւղում—50 եկեղեցի, 44 քահանաց, 25054 արական, 21822 իգ., ընդամ. 46876 ծխակ., արականը շատ է իգականից 3232 ով: Մի եկեղեցուն ընկնում է 938 ծխկ., մի քահանացին 1065 ծխկ., 50 եկեղեցին ունին ի միասին 49514 թ. 5 կ. զբաժագլուխ, 2794 թ. 34 կ. մուտք, 2742 թ. 47 կ. ելք:

Գանձակ նահանգի եւ նոյն գաւառի Գանձակ հաղափում—6 եկեղ., 1 եպիսկոպոս, 14 քահանաց, 5958 ար., 6184 իգ., ընդամ. 12082 ծխակ., իգականը շատ է արականից 226 ով: Մի եկեղեցուն ընկնում է 2014 ծխկ., մի քահանացին 863 ծխկ.: 6 եկեղեցին ունին 26423 թ. 36 կ. զբաժագլուխ, 7269 թ. 97 կ. մուտք, 7826 թ. 75 կ. ելք:

Նոյն գաւառի 23 գիւղում—23 եկեղ., 9 վանք, 2 մարգապետ, 26 քահանաց, 3 եկեղ. սպաս., 12544 արակ., 10958 իգ., ընդամ. 23502 ծխակ., արականը շատ է իգականից 1586 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1022 ծխկ., մի քահանացին 904 ծխկ.: 23 եկեղեցին ի միասին ունին 10132 թ. 20 կ. զբաժագ., 1843 թ. մուտք, 1092 թ. 36 կ. ելք: 9 վանքը միասին ունին 30 թ. 54 կ. զբաժագ., 1070 թ. 78 կ. մուտք, 1103 թ. 88 կ. ելք:

Ղազախ գաւառի Ղազախ հաղափում—1 եկեղ., 1 քահանաց, 300 արակ., 150 իգ., ընդամ. 450 ծխկ., արականը շատ է իգականից 150 ով: Սկզբանից ունի 176 թ. 7. կ. զբաժագ., 66 թ. 25 կ. մուտք, 57 թ. 25 կ. ելք:

Նոյն գաւառի 47 գիւղում—51 եկեղ., 3 վանք, 52 քահանաց, 27255 ար., 22594 իգ., ընդամ. 49849 ծխկ., արականը շատ է իգականից 4661 ով: Մի եկեղեցուն ընկնում է 977 ծխկ., մի քահանացին 959 ծխկ.: 51 եկեղեցին ունին ի միասին 20009 թ. 14 կ. զբաժագլ., 4631 թ. 28 կ. մուտք, 1752 թ. 85 կ. ելք: Վանքերի նիւթական վեճակի մասին ոչնինչ չկայ անդեկագրում:

Քուրայիս նահանգի եւ նոյն գաւառի Քուրայիս հաղափում —
1 եկեղ., 2 քահանայ, 516 ար., 500 իդ., ընդամ. 1016 ծխկ.,
արականը շատ է իդականից 16 ով: Մի եկեղեցուն ընկնում է
1016 ծխկ., մի քահանային 508 ծխկ.: Եկեղեցին ունի 824 ը.
88 կ. գրամագլ. 1558 ը. 22 կ. մուտք, 1202 ը. 56 կ. ելք:

Փօրի հայութում — 1 եկեղ., 1 քահանայ, 59 ար., 39 իդ.,
ընդամ. 98 ծխկ., արականը շատ է իդականից 20 ով: Եկեղեց-
ին ունի 336 ը. 15 կ. գրամագլ., 848 ը. 50 կ. մուտք,
250 ը. 6 կ. ելք:

Նարօպանի գաւառի 2 գիւղում — 2 եկ., 2 քահանայ,
442 ար., 420 իդ., ընդամ. 862 ծխկ., արականը շատ է իդա-
կանից 22 ով: Մի եկեղեցուն ընկնում է 431 ծխկ., մի քահա-
նային 431 ծխկ.: 2 եկեղեցին ունին է միասին 979 ը. 50 կ.
գրամագլ., 503 ը. 75 կ. մուտք, 446 ը. 9 կ. ելք:

Լեշխումի գաւառի Լալլաց գիւղում — 1 եկ., 1 քահանայ,
90 ար., 90 իդ., ընդամ. 180: Եկեղեցին ունի 561 ը. 54 կ.
գրամգ., 36 ը. 36 կ. մուտք, 5 ը. 26 կ. ելք:

Ռաշխնեան գաւառի Օօի գիւղում — 1 եկ., 1 քահանայ,
85 ար., 82 իդ., ընդամնը 167 ծխկ., արականը շատ է իդա-
կանից 3 ով: Եկեղեցին ունի 140 ը. 10 կ. գրամգ., 58 ը.
13 կ. մուտք, 30 ը. 37 կ. ելք:

Բարօւմի օրջանի եւ նոյն օրջանակի Բարօւմ հաղափում —
1 եկեղ., 2 քահանայ, 812 ար., 722 իդ., ընդամ. 1534 ծխկ.,
արականը շատ է իդականից 90 ով: Մի եկեղեցուն ընկնում է
1534 ծխկ., մի քահանային 747 ծխկ.: Եկեղեցին ունի 279 ը.
97 կ. գրամգլ., 5509 ը. 75 կ. մուտք, 5056 ը. 50 կ. ելք:

Արդուի օրջանակի Արդուի հայութում — 1 եկեղեցի, 2
քահանայ, 664 ար., 668 իդ., ընդամ. 1832 ծխկ., իդականը
արականից շատ է 4 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1332 ծխկ.,
մի քահանային 666 ծխկ.: Եկեղեցին ունի 2057 ը. 10 կ. գրա-
մագլ., 1052 ը. 87 կ. մուտք, 1288 ը. 85 կ. ելք:

Արտանուչի գաւառակի 2 գիւղում — 2 եկ., 2 քահանայ.
369 ար., 363 իդ., ընդամ. 732 ծխկ., արականը շատ է իդա-
կանից 6 ով: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 366
ծխկ.: 2 եկեղեցին միասին ունին 2589 ը. 24 կ. գրամգլ. 540 ը.
36 կ. մուտք, 226 ը. 8 կ. ելք:

Օաւեկրի գաւառակի 2 գիւղում — 2 եկեղ., 2 քահանայ,
551 ար., 466 իդ., ընդամ. 1017 ծխկ., արականը շատ է
իդականից 85 ով: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է
508 ծխական: Երկու եկեղեցին միասին ունին 1795 ը. 47 կ.

գրամագլ., 468 թ. 72 կ. մուտք, 566 թ. 35 կ. ելք:

Սօխումի ռըզանակի Մցարտ գիւղում—1 եկ., 1 քահանայ, 654 ար., 503 եդ., ընդում. 1057 ծխկ., արականը շատ է իդականից 51 ովկ. եկեղեցին ունի 200 թ. 10 կ. գրամգ., 116 թ. 93 կ. մուտք, 206 թ. 53 կ. ելք:

Ամբողջ Արաւատանի և Խէքէթի թէմում կայ ընդամենը 356 եկեղեցի, 14 վանք, 2 եպիսկոպոս, 8 վարդապետ, 370 քահանայ, 19 եկեղ. սպառ., 160379 արական, 140147 եդական, ընդամենը 300526 ծխական, որից 88117 թ. քաղաքաբնակ, 212409 ը գիւղաքնակ: Մի եկեղեցուն միջին թւով ընկնում է 844 ծխակ., մի քահանացին 815 ծխկ.: 356 եկեղեցին միասին ունին 287067 թ. 5 կ. գրամագլուխ, 121816 թ. 65 կ. տարեկ. մուտք, 100230 թ. 8 կ. տարեկ. ելք: 14 վանքը միասին ունին 38 թ. 25 կ. գրամագլուխ, 2028 թ. 52 կ. մուտք, 2054 թ. 24 կ. ելք: թէմում կայ 1 թէմական գպրանոց 597 աշակերտով և 24 ուսուցչով:

¶.

Ա. Ա. Բ. Ա. Գ. Ի. Թ. Ե. Մ

Դանձակ նահանգի նույնույ գաւառի նույնի հաղափում—4 եկեղ., 1 կուռանաց վանք, 1 եպիսկոպոս, 2 վարդապետ, 3 կոյս, 19 քահանաց, 7 եկեղեցական սպառաւոր, 7052 արական, 7232 իդ., ընդում. 14284 ծխկ., իդականը շատ է արականից 180 ովկ: Մի եկեղեցուն ընկնում է 3571 ծխկ., մի քահանացին 752 ծխական: 4 եկեղեցին միասին ունին 14977 թ. 151¹₂ կ. գրամագլուխ, 5885 թ. 91¹₂ կ. տարեկան մուտք, 4966 թ. 42 կ. տաք. ելք: Կուռանաց վանքն ունի 300 թ. գրամագլուխ, 185 թ. 20 կ. մուտք, 185 թ. 20 կ. ելք: 1 թէմական գպրանոց 17 ուսուցչով և (?) աշակերտով:

Նույնի Զերայի, Զիւանօսիր և Արես գաւառների 168 նայաբնակ գիւղում—153 եկեղեցի, 10 վանք, 166 քահանայ, 25 եկեղեց. սպառաւոր, 60522 արակ., 47693 իդակ., ընդում. 108215 ծխական, արականը շատ է իդականից 12820 ովկ: Մի եկեղեցուն ընկնում է 707 ծխական, մի քահանացին 649 ծխկ.: 153 եկեղեցին միասին ունին 11290 թ. 82 կ. գրամագլուխ, 2706 թ. 69 կ. մուտք, 2119 թ. 23 կ. ելք: 10 վանքը միասին ունին 79 թ. 13 կ. գրամագլուխ, 6631 թ. 19 կ. մուտք, 6403 թ. 90 կ. ելք:

Նոյնի գաւառի Նուխի բաղաբում—2 եկեղեցի, 1 վարդապետ, 5 քահանայ, 4 եկեղ. սպաս., 1859 արական, 1567 իգաւական, ընդամ. 3426 ծխական. արականը շատ է իգաւականից 292 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1713 ծխակ., մի քահանային 856 ծխական 2 եկեղեցին միասին ունին 10857 թ. 41 կ. դրամագլուխ, 885 թ. 96 կ. մուտք, 878 թ. 51 կ. ելք:

Նոյն գաւառի 50 նայաբնակ զիւղում—48 եկեղեցի, 2 վանք, 45 քահանայ, 2 եկեղ. սպասաւոր, 16549 արակ., 14769 իգաւակ., ընդամենը 31315 ծխական. արականը շատ է իգաւականից 1783 ով: Մի եկեղեցուն ընկնում է 652 ծխկ., մի քահանային 696 ծխական: 48 եկեղեցին միասին ունին 8160 թ. 37 կ. դրամագլուխ, 1386 թ. 54 կ. մուտք, 1270 թ. 16 կ. ելք: Ա.անցերի ունեցածը յայտնի չէ:

Բազու նահանգի Լենինական գաւառի Լենինական բաղաբում—1 քահանայ, 1 եկեղեցի. այլ ևս ոչինչ յայտնի չէ:

Ըստ այսու ամբողջ Ղարաբաղի թեմաւմ կայ 208 եկեղ., 13 վանք, 1 եպիսկոպոս, 3 վարդապետ, 3 կոյս, 236 քահանայ, 38 եկեղեց. սպասաւոր, 85982 արական, 1258 իգաւական, ընդամ. 157240 ծխական: որից 17710 քաղաքարնակ, 139530 գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 756 ծխական, մի քահանային 666 ծխական: 20 եկեղ. միասին ունին 45285 թ. 76^{1/2} կ. դրամագլուխ, 10865 թ. 10^{1/2} կ. տար. մուտք, 9234 թ. 32 կ. ելք: 13 վանքը միասին ունին 379 թ. 13 կ. դրամագլուխ, 6816 թ. 36 կ. մուտք, 6589 թ. 10 կ. ելք: 1 թեմական գպրանոց:

Դ.

Շ Ա Մ Ա Խ Ո Ւ Թ Ե Մ

Բազու նահանգի եւ նոյն գաւառի Բազու բաղաբում—2 եկեղ., 1 վարդապետ, 11 քահանայ, 2 եկեղ. սպասաւոր, 3973 արական, 3697 իգաւական, ընդամ. 7670 ծխական. արականը իգաւականից շատ է 276 ով: Մի եկեղեցուն ընկնում է 3835 ծխակ., մի քահանային 697 ծխակ.: 2 եկեղեցին միասին ունին 49445 թ. 29 կ. դրամագլ., 25937 թ. 19 կ. մուտք, 11886 թ. 35 կ. ելք: Միականների թիւը մեր կաթիքով չափազանց քիչ է բոյց արուած:

Նամախու գաւառի նամախի հաղախոմ—2 եկեղեցի, 1 եպիսկոպոս, 1 վարդապետ, 1 քահանայ, 3 եկեղեցական սպասաւոր, 2066 արական, 2026 իգական, ընդամենը 4062 ծխական, արականը շատ է իգականից 40 ով։ Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 4092 ծխական։ 2 եկեղեցին միասին ունին 9902 ր. 24 կ. գրամագլուխ, 538 ր. 72 կ. մուտք, 1253 ր. 27 կ. ելք։

Նոյն գաւառի 23 նայաբնակ գիւղում—13 եկեղեցի, 2 վանք, 11 քահանայ, 7768 արակ., 6621 իգ., ընդամ. 14389 ծխական, արականը իգականից շատ է 1147 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 1107 ծխակ., մի քահանային 1308 ծխական։ 13 եկեղեցին միասին ունին 10484 ր, 59 կ. գրամագլուխ, 1270 ր. 33 կ. մուտք, 961 ր. 57 կ. ելք։ 2 վանքը միասին ունին 3 ր. գրամագլուխ, 1177 ր. 37 կ. մուտք, 1179 ր. 98 կ. ելք։

Գեօշայի գաւառի 21 նայաբնակ գիւղում—17 եկեղ., 11 քահանայ, 8989 արական, 6826 իգակ., ընդամ. 14815 ծխակ., արականը շատ է իգականից 1163 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 1347 ծխակ., մի քահանային 871 ծխակ.։ 17 եկեղեցին միասին ունին 8389 ր. 66 կ. գրամագլուխ, 764 ր. 25 կ. մուտք, 891 ր. 19 կ. ելք։

Ղուբայի գաւառի Ղուբա հաղախոմ—1 եկեղեցի, 2 քահանայ, 390 արակ., 428 իգակ., ընդամ 818 ծխական. իգականը շատ է արականից 38 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 848 ծխակ., մի քահանային 409 ծխակ.։ Եկեղեցին ունի 16095 ր. 85 կ. գրամագլուխ, 1021 ր. 73 կ. մուտք, 1149 ր. 53 կ. ելք։

Նոյն գաւառի 2 նայաբնակ գիւղում—2 եկեղեցի, 3 քահանայ, 337 արակ., 222 իգակ., ընդամ. 559 ծխական. արականը շատ է իգականից 115 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 279 ծխական, մի քահանային 186 ծխական։ 2 եկեղեցին միասին ունին 1585 ր. 55 կ. գրամագլուխ, 85 ր. 25 կ. մուտք, 11 ր. 40 կ. ելք։

Կաղստանի Երջանի Եերքենե հաղախոմ—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 314 արակ., 386 իգակ., ընդամ. 700 ծխական. իգականը շատ է արականից 72 ով։ Եկեղեցին ունի 5007 ր. 94 կ. գրամագլուխ, 1298 ր. 75 կ. մուտք, 938 ր. 8 կ. ելք։ *

* Բաց է՝ Թողուած Զեւատի գաւառը ուր մօտ 700 ծխական կայ. ի Միւս որոց մօտ 400 ծխական Սաղեան աւանում։

Բատ այսմ ամբողջ նամախու թեմում կայ 38 եկեղ., 2 վանք, 1 եպիսկոպոս, 2 գարդապետ, 40 քահանայ, 6 եկեղ. սպասաւոր, 22837 արական, 20206 իգակ., ընդամ. 43043 ծխական, որից 13280 ը քաղաքաբնակ, 29763 ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 1133 ծխական, մի քահանային 1076 ծխական: 38 եկեղեցին միասին ունին 100211 ը. 12 կ. գրամագլուխ, 31016 ը. 22 կ. մուտք, 17091 ը. 39 կ. ելք տարեկան: 2 վանքը միասին ունին 3 ը. գրամագլուխ, 1177 ը. 37 կ. մուտք, 1179 ը. 98 կ. ելք:

Ե

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՔԵՐ

Աստրախան նահանգի Աստրախան հաղափում—5 եկեղեցի, 1 արք- եպիսկոպոս, 10 քահանայ, 9 եկեղեցական սպասաւոր, 3852 արակ., 3951 իգակ., ընդամէնը 7803 ծխական. իգականը արա- կանից շատ է 99 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1560 ծխական, մի քահանանային 780 ծխական: 5 եկեղեցին միասին ունին 177,667 ը. 22 կ. գրամագլուխ, 24116 ը. 16 կ. մուտք, 30750 ը. 8 կ. ելք տարեկան: Կայ 1 անկելանոց, ուր պատուպարւում են 17 արա- կան, 27 իգական, ընդամէնը 44 ծխական:

Նիմեկօրոդեան նահանգի Նիմեկի Նօվգորոդ հաղափում (սօ- նավաճառնոցում)—1 եկեղեցի որը ունի 12942 ը. 50 կ. գրա- մագլուխ, 790 ը. մուտք, 940 ը. 53 կ. ելք տարեկան:

Ստաւրապօլի նահանգում—6 եկեղ., 7 քահանայ, 7 եկ. սպասաւոր, 4164 արական, 3747 իգական, ընդամ. 7911 ծխակ., արականը շատ է իգականից 417 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1318 ծխական, մի քահանանային 1130 ծխական: 6 եկեղեցին միասին ունին 20693 ը. 70 կ. գրամագլուխ, 5668 ը. 64 կ. մուտք, 4601 ը. 37 կ. ելք:

Թերեմեան շրջանում—12 եկեղ., 19 քահ., 15 եկեղ. սպա- սաւոր, 5662 արական, 4840 իգական, ընդամ. 10502 ծխա- կան. արականը իգականից շատ է 822 ով: Մի եկեղեցուն ընկ- նում է 875 ծխական, մի քահանանային 553 ծխական: 12 եկեղե- ցին ունին միասին 213541 ը. 63 կ. գրամագլուխ: 21860 ը. մուտք, 20711 ը. 27 կ. ելք տարեկան:

Կուրանեան շրջանում—6 եկեղեցի, 11 քահանայ, 9 եկեղ. սպաս., 4085 արակ., 3744 իգակ., ընդամ. 7829 ծխակ., արա-

կանը իգականից շատ է 341 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1305 ծխակ., մի քահանային 713 ծխակ.: 6 եկեղեցին միասին ունին 62007 ր. 12 կ. զբաժագլուխ, 13941 ր. 32 կ. մուտք, 15260 ր. 32 կ. ելք:

Քայլսանի օրջանում—2 եկեղ., 2 քահանայ, 267 արակ., 288 իգական, ընդամենը 555 ծխական: Եգականը արականից շատ է 21 ով: Մի եկեղեցուն ընկնում է 277 ծխակ., մի քահանային նոյնպէս: 2 եկեղեցին միասին ունին 3458 ր. 39 կ. զբաժագլ., 695 ր. մուտք, 720 ր. 80 կ. ելք:

Անդրկասպեան երկրում—4 եկեղեցի, 5 քահանայ, 4 եկեղ. սպասաւոր, 1826 արակ., 1700 իգակ., ընդամ. 3526 ծխական: արականը շատ է իգականից 136 ով: Մի եկեղեցուն ընկնում է 882 ծխական, մի քահանային 705 ծխական: 4 եկեղեցին միասին ունին 10121 ր. 80 կ. զբաժագլուխ, 2745 ր. 85 կ. մուտք, 3301 ր. 75 կ. ելք:

Թութեանանի օրջանում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպաս., 280 արական, 194 իգական, ընդամ. 474 ծխակ., արականը իգականից շատ է 86 ով: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 474 ծխակ.: Մի եկեղեցին ունի 24 ր. 18 կ. զբաժագլուխ, 1112 ր. մուտք, 1088 ր. 17 կ. ելք:

Սարսառվի նահանգում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 103 արական, 98 իգական, ընդամ. 201 ծխակ., արականը իգականից շատ է 5 ով: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 201 ծխական: Եկեղեցու գբաժագլուխը, մուտքն ու ելքը չկայ:

Միիրիփայում—1 եկեղեցի, 1 քահանայ, 158 արակ., 42 իգական, ընդամէնը 200 ծխական, արականը իգականից շատ է 160 ով: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 200 ծխակ.: Եկեղեցու մուտքն ու ելքը յայտնի չէ: *

Աւրեմն ամբողջ Աստարախանի թեմում կայ 39 եկեղ., 1 արքեպիսկոպոս, 57 քահանայ, 46 եկեղ. սպաս., 20397 արական, 18604 իգական, ընդամ. 39001 ծխական, որից 29622 ը քաղաքացնակ, 9379 ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է մի-

*) Բայց է Ռողնուած Զերնամօրեան շրջանը ուր մօտ 6000 ծխական կայ:

Հին թուով 4003 ծխական, մի քահանային 686 ծխակ.։ 39 եկեղեցին ունին միասին 500456 ը.։ 54 կ. գրամագլուխ, 70928 ը.։ 97 կ. տարեկան մուտք, 77374 ը.։ 29 կ. ելք։ Կայ 1 անկելանոց, ուր պատուաբւում են 17 արական, 27 իդական, ընդամենը 44 ծխական։

Զ

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ԵՒ ԲԵՍԱԲԱԲԻԱԼՅՈՒԹԻՒՆԻ ԹԵՂ

Բեսաբիալի նահանգում—6 եկեղ.։ 1 արքեպիսկոպոս, 1 վարդապետ, 5 քահանայ, 6 եկեղ.։ սպառ., 661 արական, 783 իդական, ընդամ.։ 1444 ծխակ., իդականը շատ է արականից 122 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 241 ծխական, մի քահանային 289 ծխակ.։ 6 եկեղեցին միասին ունին 16215 ը.։ 32 կ. գրամագլուխ, 4206 ը.։ 97 կ. մուտք, 3203 ը.։ 89 կ. ելք։

Խերանի նահանգում—3 եկեղ.։ 4 քահանայ, 3 եկեղ.։ սպառոր 790 արական, 590 իդակ., ընդամ.։ 1370 ծխակ.։ արականը իդականից շատ է 190 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 457 ծխական, մի քահանին 342 ծխական։ 3 եկեղեցին միասին ունին 9735 ը.։ 50 կ. գրամագլուխ, 2550 ը.։ 75 կ. մուտք, 929 ը.։ 88 կ. ելք։

Ա. Պետերբուրգ մայրաքաղաքում—2 եկեղեցի, 1 վարդապետ, 2 քահանայ, 4 եկեղ.։ սպառուոր, 386 արակ., 195 իդակ., ընդամ.։ 581 ծխական, արականը իդականից շատ է 191 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 290 ծխական, մի քահանային նոյնպէս։ 2 եկեղեցին միասին ունին 260242 ը.։ 42 կ. գրամագլուխ, 117019 ը.։ 59 կ. մուտք, 84451 ը.։ 2 կ. ելք։

Մոսկուա մայրաքաղաքում—3 եկեղեցի, 2 քահանայ, 3 եկեղ.։ սպառուոր, 442 արական, 327 իդական, ընդամենը 769 ծխակ.։ արականը շատ է իդականից 115 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 256 ծխակ.։ մի քահանային 381 ծխակ.։ 3 եկեղեցին միասին ունին 30821 ը.։ 25 կ. գրամագլուխ, 17749 ը.։ 82 կ. մուտք, 25358 ը.։ 42 կ. ելք։ Կայ 1 անկելանոց, ուր պատուաբւում են 1 արական, 17 իդական, ընդամենը 18 ծխական։

Կոնսան զօրաց ըջանում—14 եկեղեցի, 1 վանք, 2 վարդապետ, 32 քահանայ, 32 եկեղ.։ սպառ., 4701 արակ., 4509 իդական, 9216 ծխական, արականը շատ է իդականից 192 ով։

Մի եկեղեցում ընկնում է 658 ծխական, մի քահանային 257 ծխական: 14 եկեղ. միասին ունին 26451 ր. 80 կ. գրամագլուխ, 32909 ր. 17 կ. մուտք 24623 ր. 15 կ. ելք: Վանքը ունի 167 ր. 94 կ. գրամագլ., 4912 ր. 19 կ. մուտք, 4744 ր. 25 կ. ելք: Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով և 1 անկելանոց, ուր պատապարւում են 20 արական, 40 իգական, ընդամենը 60 ծխական:

Խարբովի նահանգում—1 վարդապետ, 1 եկեղ. սպառ., 120 արական, 95 իգական, ընդամենը 215 ծխակ., արականը իգականից շատ է 25 ով:

Տաւրիկեան նահանգում—14 եկեղ., 2 վանք, 1 վարդապետ, 10 քահանայ, 13 եկեղ. սպասաւոր, 1834 արակ., 1912 իգակ., ընդամ. 3746 ծխական, իգականը արականից շատ է 78 ով: Մի եկեղեցուն ընկնում է 268 ծխական, մի քահանային 375 ծխական: 14 եկեղեցին միասին ունին 4158 ր. 80 կ. գրամագլուխ, 9078 ր. 23 կ. մուտք, 7341 ր. 19 կ. ելք: 2 վանքը միասին ունին 611 ր. 56 կ. գրամագլուխ, 1350 ր. 94 կ. մուտք, 1714 ր. 62 կ. ելք:

Նկատարենութեան նահանգում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 200 արական, 125 իգական, ընդամ. 325 ծխական, արականը իգականից շատ է 75 ով: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 325 ծխական: Եկեղեցին ունի 2584 ր. 68 կ. գրամագլուխ: մուտքն ու ելքը յայտնի չէ:

Բառ այսմ ամբողջ նոր նախիջևանի և նեսարարիայի թեմում կայ 43 եկեղեցի, 3 վանք, 1 արքեպիսկոպոս, 6 վարդապետ, 56 քահանայ, 63 եկեղ. սպասաւոր, 9124 արական, 8536 իգական, ընդամենը 17660 ծխական, որից 12904 ը քաղաքաբնակ, 4756 ը գեղագրնակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուավ 411 ծխական, 1 քահանային 315 ծխակ.: 43 եկեղեցին միասին ունին 350209 ր. 77 կ. գրամագլուխ, 183514 ր. 53 կ. տարեկան մուտք, 145907 ր. 55 կ. ելք: 3 վանքը միասին ունին 779 ր. 50 կ. գրամագլ., 6263 ր. 13 կ. մուտք, 6458 ր. 87 կ. ելք: Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով: 2 անկելանոց 21 արական, 57 իգական, ընդամենը 78 պատրիարքուածներով:

Այս անկեղեցի համեմատ ամբողջ Թուսաստանի 6 հայ լուսաւորչական թեմում կայ 1327 եկեղեցի, 79 վանք, 7 եպիս-

զուպոս, 34 վարդապետ, 1547 քահանայ, 360 եկեղ. սպասաւոր, 600483 արական, 530991 իգական, ընդամենը 1131474 ծխական, որից 217133 ը քաղաքաբնակ, 914331 ը գիւղաբնակ:

Միջին թուով մի եկեղեցուն ընկնում է 853 ծխական, մի քահանային 731 ծխական:

1327 եկեղեցին միասին ունին 1522513 ը. 45¹₂ կ. գրամագլուխ, 478472 ը. 71¹₂ կ. տարեկ. մուտք, 393636 ը. 35 կ. տարեկան ելք:

79 վանքը միասին ունին 5746 ը. 61 կ. գրամագլուխ, 43762 ը. 96¹₂ կ. տարեկան մուտք, 45248 ը. 11 կ. տարեկան ելք:

Ամբողջ Ռուսաստանում կայ 4 թեմական դպրանոց, 3 անկելանոց:

Առանձին ու շաղը թութիւն գարձնելով ծխականների թուի վրայ և այն համեմատելով այլ ազբիւրներից վերցը ած թուերի հետ՝ կարելի է եզրակացնել, որ տեղ տեղ տեղեկագրում ծխականների թիւը իրականից շատ է ցոյց տրուած, իսկ տեղ տեղ ընդհակառակն սակաւ: Այսպէս օրինակ՝ տեղեկագրում նշանակուած է Աղէքսանդրապոլ քաղաք—14773 արական, 13058 իգական, ընդամ. 27831 ծխական: այն ինչ բարձր: Տ. Մատթէոս վարդապետը իր 1600 թուին կազմած ցուցակում զնում է նոյն տեղում 9227 արակ., 9229 իգական, ընդամնը 18456 ծխական: Տեղեկագրում Աղեքսանդրապոլի գիւղերի համար նշանակուած է 6¹/514 արակ., 57331 իգական, ընդամնը 118845 ծխակ.: իսկ վերոյիշեալ ցուցակում նոյն գիւղերի համար գրուած է 57272 արակ., 51992 իգական., ընդամ. 109264 ծխական: Նոյն գիւղերի համար բարեկ. Տէր ներսէս քահ. Նիկոլոսեանը (տե՛ս Մուրճ Տ. 8, 1904 թ.) գնում է 57342 արական, 52118 իգակ., ընդամ. 109,360 ծխական: Անշուշտ, այն թուերը նոյնպէս անպայման ճիշդ համարել չէ կարելի, քանի որ կազմուած էն համարեա նոյն եղանակով, ինչպէս և մեր առաջ գրուած տեղեկագրոք, և սառուգուած գիւղական գատարաններում գտնուած ընտանեկան ցուցակներից, որոնք կազմուած էն 1886 թուին:

Տեղեկագրում նամախու թեմի ծխականների թիւը նշանակուած է 22837 արական, 20206 իգական, ընդամ. 43043 ծխական, որից 700 ը Դաղստանի նըջանի Դերբէնա քաղաքում, իսկ մնացած 42343 ը Բաղուայ նահանգում: Այն ինչ է, ու-

Զագուրսկու դեռ. ևս 1886-ին կազմած ցուցակով Բագու Նահանգում կար մօտաւորապէս 55000 հայ լուսաւորչական: Ուստի և մեզ թւում է, որ այս թեմում ծխականների թիւը չափազանց պակաս է ցոյց տրուած:

Նոյնը պէտք է ասենք Աստրախանի և մանաւանգ Նորոնաւիշնեանի և Յեսաբարքիայի թեմի համար, ուր ծխականների թիւը ըստ տեղեկագրի է 9124 արակ., 8536 բգակ., ընդամ. 17660 ծխական, այն ինչ, եթէ չենք սիսալում, Գեր. Յուսիկ եպիսկոպոսի դեռ. ևս 1895 թուին կազմած ցուցակում ծխականների թիւը այդ թեմում անց էր կենում 25000-ից: Ավոսուր այդ ցուցակը ձեռքի տակ չունենք:

Խոկ ինչ վերաբերուում է ամբողջ Ռուսաստանի հայ լուսաւորչական ծխականների ընդհանուր թուին, որ տեղեկացրում ցոյց է տրուած 600483 արական, 530991 բգական, ընդամ. 1131474 ծխական, պէտք է ասենք, որ այդ թիւը մեր կարծիքով իրականութեան մօտ է, յամենայն գեպս հաւանական է, որ իրականութեւնից աւելի առկա է ցոյց տրուած, քան թէ շատ: 1901 թիւ «Կավաչսկի կալենդար»ում տպուած է 1. Պ. Զագուրսկու 1886-ին կազմած ցուցակը, որից քաղաք ենց համեմատութեան համար հնատեալ թուեը: 1886-ին կար թիֆլիսի նահանգում 193610 հայ, Գութայիսի նահանգում 16399, Երևանի նահանգում 375700, Գանձակի նահանգում 258324, Բագուայ նահանգում 55459, Գալատանի շրջանում 1054, Կարսի շրջանում 37094, Ալ. ծովեան նահանգում 970, Զագաթալոյի շրջանում 521, Թերեհեան շրջանում 13721, Կուրանեան շրջանում 13095, Ստուրապօլի նահանգում 4709, ընդամենը 970656 հոգի ամբողջ Կովկասում: Սոյն թիւը վերաբերուում է բացի լուսաւորչականներից՝ նաև կաթոլիկ և բողոքական հայերին, որոնց թիւը 1886-ին կազմուած ընտանեկան ցուցակով էր մօտաւորապէս 31200, որը հանելով 970656-ից, միայն լուսաւորչական հայերի թիւը մնում է 939456: Խոկ 1900 թուի Ար. Գ. Գ. աեղեկագրի համեմատ լուսաւորչական հայերի (կաթոլիկ և բողոքական հայերը հաշուի առնուած չեն) թիւը ամբողջ Կովկասում 1900 թուին էր ընդամենը 1101710 հոգի (իսկ Կովկասից գուրս 29764 հ): Եթէ ինկատի առնենք, որ 1886-ից մինչև 1900 թիւը առբեկան մօտաւորապէս $1\frac{1}{2}0/0$ բազմանալով 939456 ը կարող էր գառնու 1900-ին $939456 + 225000 = 1161456$, կտեսնենք, որ տեղեկագրում հայերի թիւը Կովկասում համեմատաբար աւելի քիչ է ցոյց տրուած: Կովկասից գուրս, Ռու-

սուստանում, Բեսաբարիայի թեմում, Նոյնպէս տեսանք, որ ծխականների թիւը սրակաս է ցցց տրուած: Բայց և այնպէս, ամբողջ Ռուսաստանում հայ ծխականների 1131474 թիւը ըստ մեզ իրականնութիւնից շատ հեռու չէ Խոչպէս տեսանք Ռուսաստանում մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 853 ծխկ., մի քահանային 731 ծխական. մեր կարծիքով սոյն թուերն էլ մօտառոքապէս համապատասխանում են իրականութեան: Աակայն, կառկած չկայ, որ կարծիքներով անհնար է թուեր ստուգելուսի և խնդրում ենք այն անձանց, որոնք հսարաւորութիւն ունին աւելի ստոյդ ազգիւրներից որևէցէ տեղեկութիւն տալու սոյն հետաքրքիր նիւթի մասին, չզլունան ասպարեզ գուրս գալ:

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈԽՍԱՔՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԱԿԵՐԱՔ ԿԱՌՈԽԱԾՆԵՐԻ**

Ա. Երեսանի թիմ.—Այդն թեմի Հայոց եկեղեցիները ունին հետեւալ անշարժ կալուածները—8 այգի, 4 պարտէզ, 1 բանջարանց, մօտ 700 գ. վարելահող, 6 տուն, 1 բաղանիք և 24 կրպակ. (Աղէքսանդրապօլում գտնուած կալուածները հաշուի չէ տռնուած):

Բ. Գարաբաղի թիմ.—Աղբյ.Դ.Ալախ, Այնաժոր և Բաղաջուռ կալուածների կէոր (այս կալուածը նուիրել է Ա. Թառումեանը և գտնուած է Նարուր-Գարաբաղեազում), 1 պարտէզ 9 տուն, 21 կրպակ, 1 կտոր շինութեան համար գաւտարէ զետին:

Գ. Հնամինու թիմ.—176 գ. վարելահող, 1 բանջարանց, 6 տուն, 1 քարվանսարա:

Դ. Աստախանի թիմ.—3 այգի, 3 պարտէզ, 47 տուն, 2 շատմարան, 3 կտոր զատորէ զետին շինութեան համար:

Ե. Նոր Նախեջեւանի եւ Բհսարաբիայի թիմ.՝ 3 այգի, 3 պարտէզ, 39 տուն, 16 կրպակ, 1 քարվանսարա:

Զ. Վշաստանի եւ Խմերի թիմ.—1) Ախալցխայի Ա. Փրկիչ եկեղեցու կալուածը Ախալքալաքից զաւառում—կաքզախ, հնաւէտ, Դատէշ և Սուլաս գիւղերը, իրանց աւերակներով, լեռներով, արօտատեղիներով և այլն. մօտ 19000 գ. տարածութեամբ:

2) Մօտ 100 գ. վարելահող, 1 այգի, 16 պարտէզ, 148 տուն, 1 քարվանսարա, 2 բաղանիք, 1 ջրագաց, 132 կրպակ,

2 կրպակատեղի, 9 կտոր գատարէ գետին շինութեան համար և
1 կղզի Կուը գետում:

Վերսյիշեալ բոլոր կալուածների և կամուտը եկեղեցների
ընդհանուր եկամուտի հետ միախն է ցոյց արուած Ա. Բ. Ֆ. Գ.
տեղեկագրում, այնպէս որ անհնար էր կալուածների յատուկ
և կամուտը որոշել: Եկեղեցական տներից մի մեծ մասը գոր-
ծադրում է եկեղեցական պետոյքների համար և վարձ չէ բե-
րում: Բոլոր եկեղեցները միասին մօտ 20000 զ. հող ունին:
Դժբախտաբար տեղեկագրի մէջ կալուածների չափի, տարա-
ծութեան և արժէքի մասին կարեոր մանրամասնութիւնները
պակասում են:

Ա. Էջմիածնի 1906 թվի նևիլազնեիլ

Նախահաշիւ կազմելու սովորութիւնը շատ էլ հին չէ ո. իջ-
միածնում: Առաջին տարիներում ելեմատից լիակատար նախահաշիւ
չէր կազմում սովորական ձևով, այլ միայն ժամաներից ցուցակը
Բայց վերջին տարիներս համեմատաբար աւելի կանոնաւոր կերպով
է կազմում նախահաշիւր գոնէ ըստ արտաքինին: Տարուայ վեր-
ջիրին Անհափառի կողմից նշանակում է առաջիկայ տարուայ
նախահաշիւ կազմելու համար մի յանձնաժողով, վանքի ներքին
հաստատութիւնների—Վեհաբանի, Վանական Կառավարութեան,
Շնորհանդի և Տպարանի ներկայացուցիչների, այն Սինօդի մի
կամ երկու անդամների մասնակցութեամբ: Յանձնաժողովը ինկատի
առնելով իւրաքանչիւր վարչութեան կողմից այն Սինօդի կանցե-
լարիայից ստացուած ելեմատից տեղեկագրերը, կազմում է նախա-
հաշիւ և ներկայացնում Վեհափառին: որը հաւանութիւն տուած
դէպրում առաջարկում է Սինօդին հաստատել նախահաշիւրը:

Անշուշ նախահաշիւր կարող է ճշդութեամբ նախատեսել
ելեմուտը միայն այն գէպքում երբ ճիշդ որոշուած են այն աղ-
բիւրները, որոնց վրայ հիմնում է: Թէի համարեա անհնար է
սկզբից թուաբանական ստուգութեամբ որոշել ենթադրելի ելե-
մուտը, սակայն ամէն մի նախահաշիւ կազմողի ձգտումը պէտք է
լինի ենթադրելի և իրական թուերի տարբերութիւնը նուազագոյն
չափի հասցնել: Իսկ այս հնարաւոր է միայն այն գէպքում՝ երբ
կամ վատահիլի աղբիւրներ և այդ աղբիւրներից բարեխիղճ օգ-

տուողները Այս տեսակէտից նայելով ո. էջմիածնում կազմուած նախահաշիւնները առ այժմ կատարեալ լինելուց բաւական հեռու են Փորձը ցոյց է տալիս, որ նախահաշիւնները այնպիսի անկատար կերպով են կազմուած լինում, որ թէ նախահաշուով զեկավարուող հաստատութիւնները և թէ նոյն իսկ նախահաշիւը հաստատող առեանը ինքը ստիպուած է լինում «արտաքոյ նախահաշուի» վարուիլ:

1906 թուի նախահաշիւը թէ կազմութեան եղանակով և թէ այլ տեսակէտներով նախակին տարինների նախահաշիւններից աւելի կատարեալ համարել չի կարելի: Քանի տարին դեռ չէ վերջացել մենք հարաւորութիւն շունինք նախատեսուած ելեմուտքի յօդուածնները համեմատել իրական ելեմուտքի հետ և այց որովհեան 1906 թուի նախահաշուի հետ յարակից այստեղ ընդարձակ քաղուածններ ենք անելու նաև 1902 թուի, այն է կալուածնները զրաւելու նախընթաց տարուայ, նախահաշուից և ելեմուտք մատեանից, ուստի և ընթերցողը կարող է մօտաւոր գաղափար կազմել ընդհանրապէս ո. էջմիածնի տարեկան նախահաշուով ենթադրելի և իրական ելեմուտքի վրայ:

1906 թուի նախահաշիւը

Մ Ռ Ի Տ Գ

ա. Աւղակի գանձարանի մուտքը.—Այդիններից 2118 ո., վազարշապատի վանքապատկան կրպակներից 4478 ո., վերին ջրագցից 600 ո., վազարշապատի վանքապատկան աներից 230 ո., վարելահողերից 7327 ո., արօտատեղիններից 750 ո., քարհանքից 400 ո., Մուզին դիւզից 400 ո., վազարշապատի և Օշականի ծխահարկ 6200 ո., պատահական արդիւնք 1500 ո., Քիչնեի կալուածններից 24000 ո., Թիֆլիսի կալուածններից 12000 ո., Երևանի կալուածններից 4000 ո., Ազէքսանդրապոլի կալուածններից 4000 ո., Թեմներից՝ վիճակային արդիւնք 35000 ո., դրամագլխի տոկոսից 16000 ո. վանքապատկան գիւղերից 15000 ո., անակնկալ արդիւնք 5000 ո., ընդամենը 139003 ո.

բ. Ճեմարանի մուտքը.—Աշակերտական թօշակ 1000 ո..

գ. Տպարանի մուտքը.—Արարատի բաժանորդագին 7000 ո., օրացոյցներից 2000 ո., չափարերական մատեաններից 4000 ո., զրքերի տպագրութիւնից 1500 ո., զանազան բլանկների տպացութիւնից 1500 ո., ընդամենը 16000 ո..

Աւրեմին 1906 թուին ընդհանուր մուսկ նախատեսում էր
156003 ռ.:

Ե. Լ. Ք.

ա. Վանական կառավարութիւն. Վեհափառ Հայրապետի
տրամադրութեան տակ զնելու համար 6000 ռ., միաբանների ոօ-
նիկը 17840 ռ., *) ժամոցաղբամ 300 ռ., Մ. Տաճարի ծախը 922 ռ.,
կալուածների հարկ 3800 ռ., հիւրատան 472 ռ., Վանակ. կառավա-
րութեան դիւանական ծախը 222 ռ., Վանակ. կառավարութեան
քարտուղարի ոօնիկը 540 ռ., անոնդ միաբանների (բացի հացից)
9788 ռ., ծառանների ոօնիկը 2812 ռ., ազգարկի ծախը 4500 ռ.,
այլինների ծախը 1723 ռ., մշակագործութեան 800 ռ. քանքանները
մաքրելու և նոր հորեր փորելու 600 ռ., զեղատան 424 ռ., նաւթի
և զանելիքի 650 ռ., բաղանիքի ծախը 344 ռ., մատենադարանին
150 ռ., փանատան և ջրադաշի 1760 ռ., Ապրմասավանքի վանահօր
ոօնիկը 120 ռ., մանր ծախը 2000 ռ., Ընդհանուր 55767 ռ.:

բ. Տպարան. Գործաւորների ոօնիկը 3756 ռ., քարտուղարին
540 ռ., նաւթի և բէնզին 300 ռ., փայտ և ածուխ 250 ռ., դիւա-

*) Ոինօղը Վ. Ե. Խափառ Հայրապետի հաւանութեամբ կարգադրել է
ոօնիկները բաշխել ըստ այսմ.— 1) Վ. Ե. Խափառի տրամադրութեան տակ
զնել 6000 ռ. 2) Սինօղի անդամներին (եպիսկոպոս վարդապետ ան-
խոսիր), ընդհանրապէս եպիսկոպոս պաշտօնաններին, Ֆեմարանի տեսուչ
եւ Արարատի խմբագիր վարդապետներին 720 ռ. 3) անպաշտու եպիս-
կոպոններին, Վանական Կառավարութեան նախադատ, Տպարանի Տեսուչ
եւ Մատենադարանապետ վարդապետներին 600 ռ. 4) Վանական Կառա-
վարութեան եւ սպարատական ժողովի անդամ վարդապետներին 480 ռ.
5) Ագրարակի Կառավարիչ, Հիւրընկար, Մառանապետ, Նույնարանապետ
եւ Տնտես վարդապետներին 420 ռ. 6) անպաշտօն վարդապետներին եւ
պաշտօնեայ սարկաւաղներին 363 ռ. 7) անպաշտօն սարկաւաղներին
240 ռ.»

Եօկ 56 արանի տեսուչ եւ ուսուցիչ վարդապետները բացի վանքում
ի շարս միաբանների ստացած իրանց ոօնիկներից, ստանում են նաև
ներարանում աշխարհականների համար սահմանուած զասաղի կէսը՝ ըստ
իրանց աւանդած դասերին ձեմարանում աշխարհականների համար նե-
տեհապ դասաղներն են սահմանուած:— Նախակրթարանում 25 ռ.՝ I—III
դաս. 50 ռ.՝ IV—VI դ. 75 ռ.՝ յարանները 400 ռ.՝

Նուկան ծախը և նիւթերի ձանապարհածախը 500 ռ., Արարատի փոստի ծախը 600 ռ., լրագրների 120 ռ., կազմատան ծախը 1200 ռ., նորոգութեան և նոր զնուած իրերի 400 ռ., տպագրելի գրքերի թղթի զին 3500 ռ., Արարատի աշխատակիցների վարձատրութիւն 600 ռ., մանր և անակնկալ ծախս 200 ռ., ընդամէնը 11966 ռ.

գ. Վեհաբան. Դիւանական ծախը 450 ռ., անտեսական ծախը 1200 ռ., ծառաների հանդերձագրին 300 ռ., վառելիքի, ածուխի և այլն 500 ռ., դրագրի ոօճիկ 480 ռ., ծառաների ոօճիկ 580 ռ., ընդամէնը 3510 ռ.

դ. Ճեմարան. աշխարհական ուսուցիչների ոօճիկ 13825 ռ., վարդապետ ուսուցիչների ոօճիկ 2651 ռ., մատենագարանի հիմնական բաժնին 400 ռ., մատենագարանի աշակերտական բաժնին 200 ռ., դասագրքի 300 ռ., դասական պիտոյքի 400 ռ., բնագիտական պարագաների 400 ռ., դասագրքերի և այլ դրքերի կազմ 250 ռ., դասական և այլ կարսանների նորոգութեան 400 ռ., վերակացուների ոօճիկ 2400 ռ., քարտուզարին 600 ռ., անտեսին 400 ռ., մատենագարանապետին 300 ռ., զիւանական ծախը 150 ռ., սպասաւորների և ծառաների ոօճիկ 1500 ռ., ճեմարանի և միաբանութեան բժշկին 1800 ռ., հիւանդապահին (ֆէլչէր) 240 ռ., հիւանդանոցի ծառային 85 ռ., հիւանդանոցի ծախը 150 ռ., աշակերտների ամարային և ձմերային վերնագգեստ 3200 ռ., նոր վերաբերներ 1300 ռ., ներքնազգեստ (զօտի, թէս, թաշկինակ և այլն) 2000 ռ., կօշիկ, կրկնակօշիկ, կարկատան և գուլպայ 3300 ռ., անկողին և սպիտակեղչն 325 ռ., լուացք և կարկատան 700 ռ., նոր ներքնարկների և մահճականների 400 ռ., թէյ և շաքար 2460 ռ., մնունդ (բացի հացից) 9000 ռ., սեղանատան սպասաւորների և խոհարաբների ոօճիկ 960 ռ., խոհանոցի և սեղանատան զանազան անօթների և պարագաների 400 ռ., խոհանոցի վառելիքի, լուացատան և թէյի^(*) 1000 ռ., տարեկան հանդէսի, տօնի և զրօսանքի 300 ռ., վարսավիրայ, սանր, սալոն և ալն 230 ռ., բաղանկի 100 ռ., նաւթ, բէնզին և մոմ 550 ռ., ընդպինի լամպեր, ապակիներ և այլ պարագաներ 100 ռ., փայտ և ածուխ 800 ռ., յատակների մաքրութեան 80 ռ., յատակները, պատերը, զոները, լուսամուտները և այլն ներկելու 1000 ռ., շինութեան արտաքին կարկատան 150 ռ., պարտէղի մաքրութեան և մշակագործութեան 250 ռ., խառատի ոօճիկ 144 ռ., անակնկալ և մանր ծախքեր 300 ռ., աշակերտական լուացարանի նորոգութեան 100 ռ., կենսաթոշակ Ա. Մանդիննեանի 500 ռ., ընդամէնը 56100 ռ.

Իսկ բոլոր վանական վարչութիւնների ընդհանուր երքի գումարն է 127343 ռ., որը հանելով 156003 ռ. մուտքից՝ տարուայ-

գերջը բոտ նախահաշութ սպասում է միացորդ 28660 ռ.

Սակայն այս միացորդի մասին խօսք անդամ չի կարող լինել. քանի որ մինչև այժմ, այսինքն տարուայ կէսը, Մինօքը ստիպուած է եղել մի քանի հազար «արտաքոյ նախահաշութ» բաց թողնելու Հաւանականն այն է, որ այս տարին էլ միւս տարիների նման մի քանի հազար բացով կվերջանայ, Այլապէս լինել էլ չի կարող, քանի որ նախահաշութ կազմուած չի եղել ստոյդ հրմունքների վրայ:

Այս այսանդ համեմատութեան համար զնննք 1902 թուին, այն է կալուածները զրաւելու նախընթաց տարին, Մայր Աթոռի ունեցած իսկական մուտքը, յարակցելով, որ ներկայումս ձեռքի տակ չունինք 1902-ի նախահաշութ մուտքի մասը, ուստի և անկարող ենք ասել թէ ինչ մուտք էր նախատեսուած:

1902-ի մուտքը, Մայր Աթոռի տպարանում տպուած զրբերից 14183 ռ. 65 կ., զանազան ուխտատեղիներից 6525 ռ., յանուն ս. իջմիածնի Հայոց եկեղեցներում հաւաքուած զանձանակալդրամ 1403 ռ. 23 կ., միանուադ նուիրազրամներից 942 ռ. 50 կ., կտակներից 7828 ռ., վիճակային արդիւնք 26063 ռ. 23 կ., Մայր Տաճարի թանգարանի այցելուներից 676 ռ. 17 կ., Տաճարի մոմից 299 ռ., արժէթզթերի 0/օ-ից 14683 ռ. 77 կ., պատահական մուտք 11522 ռ. 86 կ., անշարժ կալուածներից 58910 ռ. 5 կ., մի արժէթուղթ 100 ռ., զրաւուած զրաւական 450 ռ., վազարշապատի այգէհարկ և ծխահարկ 2381 ռ. 42 կ., վանքի աղարակի անասնեղինի վաճառումից 1974 ռ. 76 կ., զինու արտից 79 ռ. 50 կ., նեմարանի աշակերտների թոշակադրամ 2600 ռ., նպաստադրամ յանուն նեմարանի 6507 ռ. 29 կ., վանքի շտեմարանից վաճառուած ցորենից 13623 ռ. 15 կ., վաճառուած հանդերձներից, պղնձի և երկաթի ամաններից և մի կիսամաշ կաթսայից 115 ռ. 20 կ., Եօթնվիրաց պատերից 489 ռ. 10 կ., «գարբասից» 330 ռ. 21 կ., Բնդամէնը 171688 ռ. 38 կ.:

Բայց ի նկատի ունենալով, որ այս մուտքից 7828 ռ. կտակադրամ է, պատահական մուտքից 10000 ռ. Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու գումարն է՝ փոխարինարար թերուած, 1974 ռ. 76 կ. անասնեղինի զին է, 6507 ռ. 29 կ. նեմարանի 25—ամեայ յօրեւեանի ասթիւ հաւաքուած գումարն է, իսկ 13623 ռ. 15 կ. վաճառուած ցորենի զին է, ուրեմն ընդամէնը 39933 ռ. 20 կ. արտակարդ մուտք է, ուստին 1902-ի սովորական մուտքը պէսք է համարել 131755 ռ. 18 կ.:

Հետաքրիբ է մանրամասնարար առաջ թերեւ նաև նոյն 1902-ի իսկական ելքը իւրաքանչիւր յօդուածի դիմաց վակագծում նշա-

Նակելով նոյն յօդուածի համար նախահաշուռով նախատեսուած գումարը կամ եթէ չէ նախատեսուած, զրելով «նախահաշուռմ չկայ», այս առանձին յիշելով այն յօդուածները, որ նախահաշուռմ կան, բայց իսկական ելքի մէջ չկան:

1902-ի ելքը.

ա. Վաճական Կառավարութիւն. անունդ միաբանութեան և աշակերտների*) 16830 ռ. 71 կ. (նախ. 12000 ռ.), միանուագ նպաստ և ճանապարհածախս միաբաններին և սուրհանդակներին 1146 ռ. 6 կ. (նախ. չկայ), հեւրատան 200 ռ. 71 կ. (200 ռ.), երկաթագործի և այլ վարսեանների 417 ռ. 85 կ. (նախ. չկայ), նաւթ 1456 ռ. 44 կ. (նախ. չկայ), կարուածների հարկ 3791 ռ. 49 կ. (3600), միաբանների հանդերձ 184 ռ. 14 կ. (նախ. չկայ), Շահարիսի և այլ վերանորոգութիւնների 268 ռ. 84 կ. (266 ռ.), ջրազացի, ղնկի վերանորոգութեան և այլ ծախսեր 1128 ռ. 57 կ. (200 ռ.), ղիւառնական ծախս Վաճական Կառավարութեան 43 ռ. 23 կ. (150 ռ.), Սինօդի հեռազբների և գրամաւոր ծրարների ծախս 56 ռ. 82 կ. (նախ. չկայ), տաճարի, խնկի, մոմի, կողդուկի և այն 1200 ռ. (700 ռ.), ղեղագուն, ղեղագործ, պատահական բժիշկ 716 ռ. 99 կ. (750 ռ.), ազարակ 7494 ռ. 60 կ. (6800 ռ.), Ամբերդի համար 96 ռ. 43 կ. (նախ. չկայ), պահապանի, սուրհանդակի, սալլապանի, մշակի և մշակագործութեան 3371 ռ. 77 կ. (1200 ռ.), հանդերձադին սուրհանդակների և շատիրների 314 ռ. 38 կ. (նախ. չկայ), Վաճ. Կառավարութեան քարտուզարին 399 ռ. 96 կ. (400 ռ.), ոօճիկ սեղնական և պատահական փաստաբանների 1834 ռ. 45 կ. (1000 ռ.), դատաստանական ծախս 32 ռ. 50 կ. (նախ. չկայ), Ժամոցազրամ 269 ռ. (300 ռ.), երկրաշափի 55 ռ.՝ 66 կ. (նախ. չկայ), շտեմարանի վարձ 15 ռ. (նախ. չկայ), զինէտան 30 ռ. 53 կ. (նախ. չկայ), տպարանի ծախս 403 ռ. 38 կ. (նախ. չկայ), Աստուածաշունչ համեմատողներին 320 ռ. (նախ. չկայ), ցորեն ազալու 57 ռ. (նախ. չկայ), ցէմէնտ, աւազ, կիր և այն 175 ռ. 50 կ. (նախ. չկայ), Հաղարծին վանքին 160 ռ. 25 կ. (նախ. չկայ), Բջնի զիւղի համար ծախս 423 ռ. 80 կ. (540 ռ.), Բիւրականի համար ծախսուած 17 ռ. 20 կ. (նախ. չկայ), ապրանքի փոխադրութեան վարձ 1736 ռ. 31 կ. (200 ռ.), Սաղմուավանքի վանահօր ոօճիկ 70 ռ. (նախ. չկայ), գաղթականներին 202 ռ. 52 կ. (նախ. չկայ), մաքրութեան ար-

*) Այդ տարին վանքի և հեմարանի սեղանը ընդհանուր էր:

տարբնոցների 45 ռ. (Նախ. չկայ), Գայիքանէ վանքին 173 ռ. 45 կ. (Նախ. չկայ), Շողակաթ վանքին վերադարձրած 270 ռ. (Նախ. չկայ), ծառանների ոօճիկ 8426 ռ. 18 կ. (7771 ռ.), Վագարշապատի և Օչականի հարկամողովներին ոօճիկ 602 ռ. 20 կ. (500 ռ.), զին ցուցահանդէսից ստացուած մեղալի 25 ռ. 34 կ. (Նախ. չկայ), զործիքներ, չիշ, աւել և ալին 1565 ռ. 72 կ. (700 ռ.), Նօտարական ծափք 59 ռ. 86 կ. (Նախ. չկայ), ողորմութիւն Վեհափառի հրամանով 124 ռ. 15 կ. (Նախ. չկայ), սի ջրին 7 ռ. (Նախ. չկայ), յորդանան շինելու 9 ռ. 60 կ. (Ն. չկայ), մատենադարան 3 ռ. (200 ռ.), մակարդակ 25 ռ. (Ն. չկայ), լուսաւորութեան գանազան պարագաներ 79 ռ. 60 կ. (Ն. չկայ), առևզանագրամ 6 ռ. (Ն. չկայ), կաստոր ի պէտս անդամոց Վ. Կառավարութեան 66 ռ. (Նախ. չկայ):

Նախահաշուի մէջ առանձին յօդուածներով կան նաև 1) ոօճիկ միաբանների 11600 ռ., որը յնտոյ Ախնօդի գանձապահը բաժանելով մտցրել է աթոռային մատենանի մէջ:

2) Բանքանների մաքրութեան ծափք 200 ռ., որը ելից մատենում առանձին ելք չէ ցոյց տրուած:

3) Մանր ծափք 1000 ռ. որը վերոյիշեալ մի քանի յօդուածներով ցոյց տրուած մանր ծափքերի դումաբն է:

4) Դարալակեազի ռ. Խաչի ջուրը բերելու համար 2000 ռ., որը նոյնոքս Ախնօդի ձեռքով է ծախսուած:

Այսպէս որ Վանական կառավարութիւնը ըստ Նախահաշուի պէտք է ծախսէր 52277 ռ., կամ աւելի ճիշտ միաբանների ոօճիկը և ս. Խաչի ջրի փողը դուրս հանելով պէտք է ծախսէր 38627 ռ., այն ինչ խօսադէս ծախսել է 56551 ռ. 32 կ., այսինքն Նախահաշուից 18124 ռ. 32 կ. աւելի Բացի սրանից մի յօդուածի համար յատկացրուած դռւմարից ըստ յարմարադասութեան ծախսել է մի այլ յօդուածի վրայ:

Բ. Վեհաւան. Վեհի տրամադրութեան տակ դրուած, վեհաբանի անտեսութեան, պաշտօնեանների, դիւանի և այլն համար ծախսուած է ընդամենը 10428 ռ. 71 կ. (8120 ռ.)

Ուրիմն նախահաշուից 2308 ռ. 71 կ. աւելի:

գ. Ճեման. Ուսուցիչների և պաշտօնեանների ոօճիկ 23769 ռ. 16 կ. (19100 ռ.), զանազան վարպետների 567 ռ. 35 կ. (Նախ. չկայ), Դիւանդանոցի 1362 ռ. 18 կ. (280 ռ. Նախատեսուած էր Հիւանդանոցի ծափքի համար, իսկ մեացեալը՝ որ գործադրուել է Հիւանդանոցի նոր շինութեան համար, Նախատեսուած չէր): Դիւանական ծափք 55 ռ. 77 կ. (150 ռ.), Նաւթ 94 ռ. 96 կ. (600 ռ.), ծառանների ոօճիկ 517 ռ. 42 կ. [(1800 ռ.) մեացածը հաշուած է պաշտօնեանների ոօճիկի հետ], ածուխ 41 ռ. 50 կ. [(50 ռ.), հան-

դերձեղէն, լուացք և կարկատան 3764 ռ. 84 կ. (5600 ռ.), զանազան իրեղններ 1647 ռ. 69 կ. (նախ. չկայ), թէյ և շաքար 1930 ռ. 45 կ. (1800 ռ.), առանձնապէս ծախուած աշակերտների մննդեան վրայ 115 ռ. 44 կ. (նախ. չկայ), կօշիկ և կրկնակօշիկ 3296 ռ. 70 կ. (300 ռ.), գիրք, տետրակ և հիմնական մատենադարան 271 ռ. 41 կ. (300 ռ.), անօթ, կարասի 162 ռ. 87 կ. (550 ռ.), մաքրութիւն արտաքննութիւն 80 ռ. (նախ. չկայ), մշակագործութիւն 154 ռ. 20 կ. (նախ. չկայ), վառելիք 980 ռ. (800 ռ.), տնտեսին և աշակերտներին ճանապարհածախոս և մանր ծախը 213 ռ. 83 կ. (500 ռ.), ընդամէնը 39030 ռ. 37 կ.:

Բացի սրանից նախահաշւում կան հետեւեալ յօդուածները՝ մում, լամպ, պատրոյկ—130 ռ., մատենադարանին 200 ռ., կազմի 200 ռ., բնագիտական պարագայ 300 ռ., դասական պիտոյք 460 ռ., պահարան մատենադարանի համար 200 ռ., վարսավիրայ և այլն 100 ռ., մաքրութեան և կարկատանաց 480 ռ., անակնկալ ծախը 200 ռ., թոշակ Ա. Մանդինեանի 500 ռ., վարդապետ ուսուցիչներին 2600 ռ. Սոյն յօդուածներում յատկապէս յիշուած զումարներից վարդապետ ուսուցիչների ոօժիկը երեխ պաշտօնեաների ոօժիկի հետ միասին է հաշուած, Ա. Մանդինեանը իր թօշակը ստացել է թերես ուղղակի Աբնօդի զանձապահից, իսկ մնացեալ յօդուածներում յիշուած զումարները մասամբ ծախուել են նախահաշւումի չնախատեսուած առարկաների վրայ և մասամբ ներկայացնուում են տարուայ վերջի մնացորդը:

Նախահաշւում սահմանուած էր ձեմարանի ծախս ընդամէնը 39900 ռ., բայց ծախուած է 39030 ռ. 37 կ., ուստին մնացորդ եղել է 869 ռ. 63 կ.:

Կ. Տպարան. Արովինստ տպարանը մասամբ արզինարերական հաստատութիւն է, ուստին նրա ծախսի մանրամասն յօդուածները առաջ բնրելը աւելորդ ենք համարում, միայն ներառենք, որ նախահաշւում ելք նշանակուած եր 15600 ռ. 50 կ., այն ինչ իսկական ելք եղել է 12248 ռ. 1 կ., այսինքն նախատեսուածից 3352 ռ. 49 կ. պակաս:

1902-ի նախահաշւում վան, կառավարութիւնը պէտք է ծախսէր 38627 ռ., ձեմարանը—39900 ռ., վեհարանը 8120 ռ. Տպարանը 15600 ռ. 50 կ., ընդամէնը 102247 ռ. 50 կ., Այն ինչ վան, կառավարութիւնը ծախսել է 56551 ռ. 32 կ., ձեմարանը 39030 ռ. 37 կ., Վեհարանը 10428 ռ. 71 կ., Տպարանը 12248 ռ. 1 կ., ընդամէնը 118258 ռ. 41 կ., այսինքն նախահաշւումից 16010 ռ. 91 կ. աւելի:

Մի կողմ թողնելով Տպարանը, կտեսնենք, որ կ., կառավարու-

Բիւնը, Վեհարանը և ձեմարանը ծախսել են բնդամէնը 106010 ռ.
48 կ., Սրա վրայ պէտք է աւելացնել մօտ 14000 ռ. գործածուած-
ցորենի, իւղի և պանրի գին, որոնք ստացւում են բնական թերքով և
նախահաշուի մէջ չեն մտած, այլի միաբանութեան 11600 ռ.
ոօճիկը, որը տրուած է Ախոսդից, այն ժամանակ կլոր թուով տա-
րեկան ծախս կոտանանք 131600 ռ.

Խակ 1906-ի նախահաշուի նոյն ծախսը ենթադրւում է 129500
ռ. մօտաւորապէս:

Ինչպէս տեսանք՝ 1902-ի սովորական մուտքն էր 131755 ռ.
18 կ., 1906-ի մուտքի մասին դեռ ոչինչ չի կարելի ասել:

Վերոյիշեալ երկու տարբիների ելեմտից յօդուածների սոյն
համեմատական թուերը մէջ բերելով, մենք շօշափեցինք միայն
ինդրի արագքին, մեքենայական կողմը, Խակ ինչ վերաբերւում է
թուերի բովանդակութեան և ներքին իմաստին, այլ խօսքերով՝
թուերի լեզուին, դրա մասին մի այլ անդամ:

Մ. Աբովի Տարեկան միջին մուտքը 1897, 1898, 1899,
1900 և 1901 բուերի հնգամեայ ըցանում:

Կալուածներից 43897 ռ. 14 կ., ուխտառեղիներից 4078 ռ.
38 կ., յանուն ձեմարանի նուէրներից և աշակերտական թոշակա-
դրամներից 10617 ռ. 52 կ., յանուն Մ. Աթոսի կոտակներից և
նուէրներից 1076 ռ. 71 կ., զանազան իրերի վաճառումից 6372 ռ.
76 կ., Մ. Տաճարի արդիւնք 1245 ռ. 33 կ., շուկայի մաքրութեան
համար ստացուած տուրք 432 ռ. 16 կ., վախճանուուած կուսակրօն
հոգևորականներից մնացած զրամ 4023 ռ. 89 կ., Աղեքսանդրապօլի-
եօթնվիրաց պատկերից 775 ռ. 2 կ., Վազարշապատի ծխահարկ և
այգեհարկ 2346 ռ. 26 կ., Օշականի ծխահարկ և այգեհարկ 2259 ռ.
36 կ., Եղուարդայ և Մաստարայի ծխահարկ և այգեհարկ 106 ռ.
68 կ., Մ. Աթոռում տպուած օրացոյներից 2255 ռ. 95 կ., Հա-
փարերական և այլ մատեաններից 3876 ռ. 6 կ., Աբարատ ամսագրի
բաժանորդադին 5263 ռ. 6 կ., զրբերի վաճառումից 5859 ռ. 90 կ.,
տուղանադրամ 68 ռ. 20 կ., պսակադրամ, հոգերաժին և առնասարակ
վիճակային արդիւնք 16969 ռ. 10 կ., պտղի 1267 ռ. 49 կ., դար-
բաս 367 ռ. 64 կ., գանձանակադրամ 2479 ռ. 55 կ., արժէթզթերի
0/0—16000 ռ. (մօտաւորապէս), բնդամէնը 131638 ռ. 16 կ.-ը

Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ սոյն 131638 ռ. 16 կ.-ը
իւկական մուտքն է: Այս հաշուի մէջ չեն մտած հետեւալ ձեական

մուտքերը — նոր դնուած արդէթղթերը, կուսակրօն հոգենրականներից յետ ստացուած փոխարինաբար տրուած դումարները, կուսակրօնների ոօձիկներից աւելացածը և տարուայ վերջին վանքի ներքին վարչութիւններից վերագրաձրած աւելացած դումարները և նկատի չէ առնուած նաև բնական բերքով վանքապատկան դիւղից ստացուած հասոյթները:

Վիճակային եւ օտարային արդիւնք

Վիճակային արդիւնք կոչուում է այն կամաւոր տուրքը, որը պասակաղրամ, հոգեբաժին և այլ անուններով ստացուում է ծխականներից թեմական հաստատութիւնների և Մ. Աթոռի պահպանութիւննեան համար: Վիճակային կոնսիստորիանները և Հ. Կառավարութիւնները այդ դրամից են վճարում թեմական առաջնորդների, փոխանորդների և առհասարակ թեմական հաստատութիւնների մէջ ծառայողների ոօձիկները և կանցելարիական ծախըլը կոնսիստորիանները վիճակային արդիւնքը զրում են «վիճակային արգեանց» մատեանի մէջ: Բացի վիճակային արդիւնքից կոնսիստորիանները գանձուում են նաև օտարային կոչուող արդիւնքները — Մ. Աթոռի տղարանի գրքերի գինը, աթոռուապատկան գանձանակաղրամը, կուրաց և զէմօ-աւշալեան ապաստարանի գանձանակները և առհասարակ այնպիսի կողմնակի եկամուտները, որոնք մանում են որպէս աւանդ: Այս աւանդներից մի մասը — զրքերի գին, աթոռուապատկան գանձանակաղրամ և այլն, որոնք Մ. Աթոռի հասոյթներ են. թէև կոնսիստորիանների համար «օտարային» բայց հասնելով Մ. Աթոռ մտնում են աթոռային մատեանի մէջ, իսկ մնացեալ զումարները — կուրաց և զէմօ-աւշալեան գանձանակները և այլն — որոնք կողմնակի հաստատութիւններին են պատկանում: Այնողը մտցնում է աւանդաղրամոց մատեանի մէջ և ուղարկում ըստ պատկանելոյն կոնսիստորիանները օտարային արդիւնքները պէտք է գրեն «օտարային արդեանց» մատեանի մէջ:

Որպէսզի ընթերցողը գաղափար կազմի վերոյիշեալ արդիւնքների մասին և թէ այդ արդիւնքներից ինչ է հասնում Մ. Աթոռին, այստեղ մտադիր էինք առաջ բերել վիճակային կոնսիստորիանների 1902-ի ելեմուտքը, բայց որովհեան սոյն յօդուածը գրելիս Սինօդում չկարողացանք գտնել Շամախու կոնսիստորիայի 1902-ի մատեանները և Նոր Նախիջևանի և Բնարարիայի կոնսիստորիայի

1902-ի և 1901-ի մատեանները, ուստիև ամբողջութեան և հաշմատութեան համար բարսք համարեցինք նշանակել Շամախու Կոնսիստորիայի 1901-ի ելեմուտքը, և Նախիջևանի և Ենարքի այի կոնսիստորիայի 1900-ի ելեմուտքը, իսկ մնացեալ Կոնսիստորիաների 1902-ի ելեմուտքը։ Յատկապէս 1902-ի հաշիւը ցանկացանք տալ, ի նկատի ունենալով սոյն յօդուածի կազմը նախընթացի հետ։

ա. Երեւանի Հայոց Վ.ին. Կոնսիստորիան 1902-ին վիճակային և օտարային արդիւնքը խառն գրել է մի մատեանի մէջ։ Տարեկան մուտք եղել է 38942 ռ. և ելք նոյնքանու Բայց սոյն գումարից 7244 ռ. 98 կ.-ը Մ. Աթոռի կալւածների արդիւնքն է՝ Կոնսիստորիայի միջոցով յողովուած և ուղարկուած Մ. Աթոռին, այնպէս որ իսկական մուտքն և երբն է 31697 ռ. 2 կ., որից Մ. Աթոռին է ուղարկուած 31581 ռ. 83 կ., նաև պէտք է զիտենալ, որ սոյն գումարից նախահաշով կոնսիստորիան Մ. Աթոռից յիշ է ստացել իր ձախոսերի և փոխ-թեմակայի ոսճկի համար 6904 ռ., ուրեմն Մ. Աթոռը ստացել է կոնսիստորիայից վիճակային և օտարային արդիւնք 24677 ռ. 83 կ.։

բ. Վազսանի և Խեկերի Վ.ին. Կոնսիստորիան 1902-ին նոյնպէս վիճակային և օտարային արդիւնքը մի մատեանի մէջ է գրել Մուտք եղել է 18384 ռ. 87 կ., ելք նոյնքանու Առյու ելքից Մ. Աթոռին է ուղարկուել 5 ռ.։

գ. Պարաբաղի Վ.ին. Կոնսիստորիան 1902-ին ունեցել է 1) վիճակային արդիւնք—1901-ից մնացորդ 2221 ռ. 39 կ., տարեկան մուտք 6747 ռ. 36 կ., ընդամենը 8968 ռ. 75 կ., իսկ ելք 6876 ռ. 27 կ., Տարուայ վերջը մնացորդ մնացել է 2092 ռ. 48 կ.-ը Մ. Աթոռին ոչինչ չէ ուղարկուած։ 2) Օտարային արդիւնք—մնացորդ 1901-ից չկայ, տարեկան մուտք 1377 ռ. 96 կ., ելք նոյնքան, որից 1326 ռ. 99 կ. ուղարկուած է Մ. Աթոռին։

